


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ՅԱՐԱՌԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ քրոթիւն  
պէտք է ուղղել առ.

ԽՄԲԱԳԻՐԹԻՒՆ Փ ՐՈՍ ԼՐԱԳԻՐ  
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS  
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութեան արժեք. ողջ 45. 80  
, , վեցամսեայ , 50  
Օտար երկիրներ տարեկան 30  
, , վեցամսեայ , 14  
Թղթատարի ծախք խմբագրու-  
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղումն եւ  
մակ կամ այլ քրոթիւն եւ չի տրուիր :

ԻՆՉՈՒ ԶԵՆ ՈՒԶԵՐ

1895էն ի վեր, Եգիպտոսի հայերը առաջնորդ չունին կամ տրամադիր չեն եղած ունենալու, և կը շատանան տեղապահով : Ինչո՞ւ այս երկարաձգումը :

Պատճառը քանի մը կերպով կրնայ մեկնուիլ. նախ որ համերայնութիւն չի կայ Գահրէի ու Աղեքսանդրիոյ ազգային մարմիններուն միջեւ, և ամեն անգամ որ առաջինները կը խորհին այս կարեւոր գործողութիւնը կատարելու ձեռնարկել, վերջինները ձեռնպահ մնալու կասկած կուտան, մինչեւ իսկ առաջնորդին յատկանայի թոշակին կէսը իրենց անուակէն չի վճարելու սպառնալիքով, հակառակ աւանդաբար ընդունուած սովորութեան :

Յետոյ, ընդհանուր կերպով, հո՞ւն է եղեր հո՞ւն է եղեր, անգլուստ մնալուն մէջ տեսակ մը հաճոյք, փառասիրութիւն զգացողներ շատ կան : Եթէ առաջնորդին պաշտօնը ըլլար միմիայն եկեղեցիին մէջ նախագահել արարողութիւններուն, պատարագել, քարոզել, դիւրաւ կը համաձայնէին աւելորդ ու փառաւոր եպիսկոպոսի մը վրայ. բայց եկ'ո՞ւ տես որ ընտրելի եկեղեցականը պիտի ըլլայ միանգամայն վարչական բոլոր գործերուն պէտքերը ու հսկողը, սահմանադրական սկզբունքներուն պահպանը, ժողովուրդին ու ժողովականներուն միջեւ հաղորդակցութեան և միութեան կապ մը. ահա՛ ինչ որ կարգ մը ազաներու ջիղերուն կը դաչի :

Եւ սակայն այս պայման չի կրնար շարունակուիլ : Մինչեւ իսկ Ամբիկայի հայ գաղութականութիւնը որ ո՛չ եկեղեցի ունի ո՛չ առաջնորդարան ու նոր կը ստանայ իր կազմակերպութիւնը, փափագող և հետամուտ է առաջնորդ մը ընտրելու, թէեւ քանի մը այցելու վարդապետներ կան իր մէջ. Եգիպտոսի հայ գաղութը անոնց չա՞փ ալ փութկոտութիւն ու նախանձախնդրութիւն ունենալու չէր :

Յապաղում մը կամ թերութիւն մը դարձանելու միշտ ժամանակ կայ սակայն : Առաջին Տեղապահ ընդհ. ժողովոյ ատենապետին ուղղած իր նամակով՝ զոր հրատարակեցինք կը յիշեցունէ առաջնորդի ընտրութեան պէտքը և տարակոյս չունինք որ Տիգրան փաշա այն գնահատելի հոգածութեամբ որով կը հսկէ

այստեղի ազգային գործերուն վրայ, այն ուղղամիտ ու բարձր զգացումներով որոնք իր յատկանիշը կը կազմեն, հասած պիտի նկատէ այլեւս ընդհանուր ժողովի գումարման ու առաջնորդի ընտրութեան թուականը :

Կրնայ ըլլալ որ գտնուին ժողովականներ, հոգաբարձուներ, էֆէնտիներ որոնք առաջնորդարանի կամ թաղական խորհրդարանի միջնորդող այնքան հեշտ գտած ըլլան որքան ցուրտ երկիրներէ եկող թուախիթը վերին Եգիպտոսի տաքուկ կլիման, և հետեւաբար փորձեն ընդդիմանալ ո՛րեւէ գործողութեան որ գուցէ առաջիկային մէջ խախտէ իրենց դիրքը. ամեն բան ախեբնուն մէջ ունենալու, հրամայելու, ախրապետելու, հրապարակաւ համար չի տալու. վարժուած մարդիկներ՝ որոնք օրինապահ առաջնորդի մը ներկայութենէն կը խորշին. և ճիշդ ապօրինաւորութիւնները բառնալու համար է որ առաջնորդ մը անհրաժեշտ է :

Մենք ընտրելի չենք ներկայացներ. երեսփոխանական ժողովին կիցայ խորհրդակցելու ու համաձայնելու եկեղեցականի մը վրայ որ երկաթէ կամք, վարչական գործերու հմուտութիւն, անկողմնակալ ու օրինապահ ոգի ունենայ, եկեղեցականի մը վրայ վերջապէս որ ինք վարէ ժողովները և ո՛չ թէ ժողովականներ զինքը վարեն, ինչ որ շատերուն բաղձալի խտէալն է :

ԱԿԱՄԱՅ ՀԵՐՈՍԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Շարունակութիւն ճախող քիւեց

Դ.

Այդ յեղափոխական կերպով տեսնելով երկու շարժի շափա Այդ միջոցին երթալով համարու կը մեծնար, այնպէս որ Պ. Շապուհ նոյն իսկ չէր համարձակել ինծի առաջարկելու որ պարսկական սահմանազնէն թուրքի տարածքը համար նորոգելիք հրատարակին մասնակցիմ, վախճալով որ իրաւունք պիտի ունենամ հրամանատարութիւնը պահանջելու : Այսուհանդերձ գործ մը գտնելով գլխիս ճարտարներ ալեքը կը գտայի և ասոր համար որոշեցի Աթէնք ելլել և քանի մը օր հոն մնալ : Չորս օրի չափ հոս ու հոն գիւմարներ ընելէ ետքը յառաջատ վերադարձայ Բիրթ՝ որ գտնէ ձրի ճաշ մը կրնայի կոր գտնել :

Երեւակայէ՛ վիճակս երբոր Լեւոն դէմս ելլելով ըսաւ .

— Իմացա՞ր, Շապուհը գնաց :

— Ո՞ր :

— Իրաւ որ չեմ գիտեր. երկէ տուտու մեր ընկերները նաւահանգիստը հանդիպել են իրեն : Երկու ձեռքը մէյակէ պայուսակ նաւակ կը մտնէ կոր եղեր « Ո՞ր կերթաս », հարցուցեր են :

« Ես գնում եմ արտասահման, պատուեցր է նաւակին մէջէն, կենդրոնից հրահանգ եմ ստացել հենց այս րոպէիս գնալու » :

Շուարած մնացի :

— Արդէն կը գուշակէի որ կծիկը պիտի գնէր այս օրերս, վրայ բերաւ Լեւոն, որովհետեւ բոլոր ստակները հառցուց խումբ պիտի կազմեմ՝ ըսելով :

— Եյ, ի՞նչ պիտի ընենք հիմակ, կերակուրինս ո՞ր պիտի ուտենք, հարցուցի մտաւորանքութեամբ :

— Աստուած ողորմած է, պատասխանեց Լեւոն փկլխափայտաբար. ինտոր է նէ՛՛ տրիշ նոր գործիչ մը կուգայ « կենդրոնից » խումբ կազմելու. քիչ մը համբերելու է :

Պէտք էր համակերպել ճակատագրին : Այն իրիկունը առանձին գացի ճաշարան ու ինքն իմ գըլ-խիս կերակուր կերայ : Ասկեզնայի ու Կրէտացի յայները նորէն ժողովուած էին հոն, ինչպիսի ամէն գիշեր. բարեկեցին զիս « րաթիթիթ » ըսելով ու պինի հրամցուցին, բէշիման, « մայր ամենայն . . . չարեաց » :

Կերակուրս ընդունելէ ետքը մեկնելու վրայ էի, երբ Կրէտացիներէն մին քովս եկաւ ու հարցուց թէ ո՞ր էին միւս ընկերներս :

Պատասխանեցի թէ մէկ մտաւ մեկնած էր և միւս մտաւ մեկնելու կը պատրաստուէր :

— Հո՞ւն, ըսաւ ձեռքովը անորոշ կէտ մը ցոյց տալով, որ Պոլսոյ ճամբան ըլլալ կը թուէր :

Հաստատական նշան մը ըրի գլխովս, մտաւ բերնիս տանելով :

Յայն ի իսկեւ մը ուսիս դարկիւ, կարծես ըսէ. լու համար. — « Եկեցէ՛ք » :

Յետոյ կտակցուկ մը հարցուց .

— Դո՞ւն :

Չեմքի չարժուածով մը պատասխանեցի. չարժում որ կրնայ սա կերպով թարգմանուիլ :

— Իմին ալ տեսնա կայ :

Յայն նորէն թեթեւ մը ուսիս զարկաւ գոհու. նախաթեան ժպիտով մը և տխուր մը տունելով քովս նստաւ ու հրամայեց որ չիչ մը ռէշիմա բերեն մեզի : Երկու ժամուան սիրալիլ տեսակցութենէ մը ետքը հրաւրեց զիս որ հետեւեալ օրը ճաշը իրենց հետ ընեմ :

Խոստացայ ու բաժնուցանար :

Հետեւեալ գիշերը խմբուցանք ճաշարանին ներսի կողմը առանձին անկիւն մը. տանըմէկ հոգի կինը ամենքս, ինչ զատ բոլորն ալ Կրէտացի ապաւտակներ : Կերանք ու խմեցինք « զորս զու պատուիրեցեր » :

Ռէշիման ամենուս գլուխը դարձուցեր էր Գա. նարիսին տեսնելն մինչեւ հիմա որչափ յոռնաբէն երգ որ չինուած է ամենին ալ երգեցին :

Կէս գիշերին մօտ ճաշարանէն ելանք ամէնքս ալ գինով և ուզուեցանք միշտ երգելով, Ապուրանի հրապարակը, յետոյ ծովին ճամբան բռնեցինք ու բաւական քաղելէ ետքը հասանք Քրափտարուի ծովախորշը :

Բաւական խոշորեկ նաւ մը կեցած էր հոն :

Ընկերներն մէկիկ մէկիկ նստ. մտան ու գլխ ալ հրաւիրեցին :

— Ի՞նչ պիտի ընենք նաեւ մէջ, հարցուցին :

— Սանկ պզտիկ պտույտ մը, պատասխանեց զիս ճաշի հրաւիրողը խնդալով ու թեւէս քաշեց նաւ մաներու համար :

— Է՛, Բարիթան Մանուկ, մեզի գինի չե՞ս հրամայեցիր, պտույտ մին :

Ու բէշինալի օսմեհնաւ մը եկաւ մէջտեղ :

Նաեւ ճամբայ ելաւ ու մենք սկսանք խմել :

Ընկեր երա հոգեւորներն պարպեցին ու «Չիթօ Ելլատ» սկսաւ պտույտ ֆիշ մը ետքը ալ կարողութիւնս չէր մնաց : ու ին այ գետին անգգայ վիճակի մէջ :

Ե.

Երբ աչքերս բացի գրեթէ լուսցած էր, սաստիկ հով մը կար ու նաեւ անդադար կը տատանէր : Մէկէն ի մէկ չկրցայ ըմբռնել թէ ո՛ր կը գտնուիմ : Կամայ կամայ միտքս բերի առջի իրիկաւնէ, ի վեր անցած դարձածը և սակայն նորէն բացատրութիւն մը չէի կրնար տալ թէ ինչո՞ւ համար տակաւին նաւին մէջն էի, քանի որ միայն պզտիկ պտույտ մը պիտի ընէինք :

Ոտքի ելայ ու չորս կողմս սկսայ նայիլ : Բոլոր ընկերներս տախտակամածին վրայ երկնցած կը խռկային : Միայն նաեւ մարդիկը արթննէին :

Մտեցայ զեկամարին որ ձերտնի մըն էր :

— Ո՛ր կերթանք կոր ասանկ, հարցուցի անձ կութեամբ :

— Չե՛ս գիտեր :

— Չէ՛ :

— Կերեւայ որ գինովութիւնդ դեռ չէ անցեր, պատասխանեց խնդալով :

— Քարիթան, կաղաչեմ ըսէ, ո՛ր կերթանք կոր, հարցուցի նորէն պաղատաբար ձայնով մը :

Մարդը թեւը երկնցուց գէպի ծովին բացը :

— Քիթիթի :

Կայծակնազար մնացի . . . :

Յետոյ, հեռուն, ամպի պէս բան մը ցուցուց և ըսաւ .

— Կը տեսնո՞ս, արդէն Ասրո Վառնոն երեւոյ սկսաւ :

Կրեւոյ լեռները ըսել կուզէր :

Գոհունակութեամբ մը աւելցուց :

— Այս նպատակաւ քամիով կէս գիշերին կը հասնինք Սրապա :

Եւ, իրաւ, նաեւ գրեթէ թռչելով կերթար :

Մերունի զեկամարին լեզուն մէյոք բացուած էր, ուստի սկսաւ խօսիլ .

— Չորս կողմէ նայէ՛, բաքիթօքի, գոչեց խառն դափառ ձայնով մը, բոլորն ալ յանկան կը զլինէր են տեսանքերը :

Ու ձեռքովը մէկիկ մէկիկ ցոյց տուաւ :

— Ահա՛, Ծառոս, Անդիֆարոս, Նիոս, Սիֆնոս, Սիլինոս, Միլոս ու հեռուն՝ Չէրիօ, Սանգորին, Բոլիֆանկրոս, ա՛հ, մեր երկիրը մեծ, շատ մեծ երկիր է :

Մե՛ծ շատ մեծ երկիր ըսածը, ամբողջ Յունաստանը, նոյն միջոցին քապախի, սկէս աչքիս առջեւ էր, կրէտէն ալ միասին հաշուելով :

Չգեցի չառախոս զեկամարը ու դարձայ զիս ճաշի հրաւիրող ու նաւ մոյնող յոյնին բով որ դեռ պառկած կը քնանար :

Մշտեւով արթնացի զինքը :

— Ի՞նչ է այս ինչի ըրածդ, ըսի խիստ ու լուրջ ձայնով մը :

Մարդը աչքերը շիւղեց ու կէս մը խնդալով պատասխանեց .

— Ի՞նչ կ'ընէ ի՞նչ եղաւ :

— Ինչո՞ւ իս խաբելով նաւ մոյնացիր ու կրէտէ կը տանիր :

— Ե՞ս խաբեցի քեզի : Դուն չէի՞ր որ օրերով ետեւէս ինչոր ու աղաչեցիր որ քեզ հետերնիս կրէտէ տանինք :

— Ե՞ս :

— Այո՛, դուն :

Ու ահա՛ կրիւ մըն է սկսանք իրարու հետ : Ձայները այնչափ բարձրացան որ մեր չուրջը բնացողները՝ բոլորն ալ՝ ստքի ելան ու եկան մեզի հանդարտեցնելու :

Իրենցմէ մին վճռական ձայնով մը ըսաւ .

— Ելլածը եղած է, քեզի համար ետ չենք կըրնար դառնալ, թէ՛ հետերնիս չեն ուզեր գալ ու անպատճառ ետ դառնալ կուզեն, կրնա ծովը նետուիլ ու լողալով երթալ Բիթէ :

Մտածեցի որ մարդուն ըսածը չխառն էր ու համակերպելէ ուրիշ ճար չի կար :

Սակայն կուզէի հասկնալ թէ ի՞նչ էր այդ յոյնին շահը զիս ասանկ խաղի մը բերելով : Նստին մէջ գտնուողները հարցափորձեցին ու հասկցայ որ Էրեթիլի Հեթերիան բան արտաքին նուէր կուտայ եւ դեր այն մարդուն որ կրէտէ կամ Մակեդոնիա գաւցող կամաւոր մը կը դռնէ :

Ես ալ ահա՛ ասանկ կամաւոր մը եղած էի :

Բայց աւելի ճիշդ կըլլար ըսել «բանի կամաւոր» մը : Չերկնցեմ՝ զեկամարին ըսածին պէս՝ կէս գիշերին հասանք Կրէտէ : Ամայի տեղ մը, դէպ ի ծով երկնցած գլուխ մը, որուն Սրապա կըսեն եղեր : Սեպտեմբեր 26ին էր . անձրեւոտ, ցուրտ գիշեր մը :

Նաեւ ցամաքէն քանի մը մէթր հեռուն կեցաւ, որովհետեւ բոլոր ծովեզերքը ժայռերով ծածկուած էր և ստիպուեցանք կէս մը հանուիլ և ըսորին ու քարերուն մէջէն քարելով ելլել ցամաք :

(Շարունակելի)

ԺԻՐԱՅԻ

## ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Փետրուար 16ին Լոնտոնի մէջ հրատարակուեց Կապոյտ Տետրակ մը որ կը վերաբերի Հայաստանի վերջին դէպքերուն :

Մեծաւ մասամբ կը խօսի 1897ի դէպքերուն վրայ և կը յիշէ այն ջանքեր զորս Ֆրանսա և Անգլիա ըրած են միահաղոյն, ասիական թուրքոյ քրիստոնէից վիճակը բարելոյն համար :

— Թայմզին Օտեսայի թղթակիցը կը հեռագրէ թէ Կովկասի ռուսական զօրաբանակին վրայ 15,000 հոգի աւելցեր է վերջին ատեններս . ասոնք մեծաւ մասով դէպի տաճկական սահմանադուլը զրկուած են : Կարսի, Օրթիի և Ալեքսանդրօքի բանակետներն ալ հրետանիի մթերքներ ստացիւ են :

— Նախընթաց շարժումն նախարարական փոփոխման մը վերաբերող զրոյցներ հասած էին Կ. Պոլսէ : Փրանկֆուրթէր Չայքունի առած տեղեկութիւններուն նայելով, այդ զրոյցներուն ծնունդ տըւող պարագաները հետեւեալներն են . երբոր Դուռը ստացաւ պուլկարական վերջին ծանուցագիրը, որուն պաշտօնապէս բնաւ կարեւորութիւն չեն ուզեր տալ թուրքերը, խալիլ Բիֆաթ փաշա հրաւիրուեցաւ յանձնել եպարքոսական կնիքը զոր Սուլթանը տուաւ թնդանօթարանի վերատեստէ Զէքի փաշայի : Բայց երկու ժամ ետքը կանչեց Զէքի փաշան և կնիքը ետ առնելով նորէն յանձնեց խալիլ Բիֆաթ փաշայի :

— Կ. Պոլսէն կը հեռագրեն Տէյքի Թէյէկրաճին թէ մեծ Տէրութեանց գեսպանները ծանուցագիր մը տուեր են Դրան, հրաւիրելով զայն գաղթեցունել Թեսալիոյ մէջ զինուորական ո՛րեւէ շարժում որ կրնայ դժուարեւ ժողովուրդը ու հրաժարիլ տուրքեր հաւաքելէ, քանի որ թուրքոյ վճարուելիք պատերազմական տուգանքն ապահովուած է :

— Թեսալիոյ բանակին հրամանատար Էսահէմ փաշա հրաման ստացիր է Իսկիւլ (Մալեդոնիա) երթալ, քննութիւն մը բանալու համար վերջերս այդ նահանգին մէջ պատահած անկարգութիւններուն վրայ ու ժողովուրդը հանդարտեցնել :

— Օտեսայէն կը հեռագրեն Թայմզին թէ ռուս կառավարութիւնը Կ. Պոլսոյ իր դեսպանին միջոցաւ բանակցութեան մտած է Դրան հետ, որպէսզի Սեւ ծովի ռուսական զրահաւորները անցնին Տարսանէլէն :

Թայմզի թղթակիցը դիտել կուտայ այս առթիւ թէ ռուսական կառավար. նաւատորմին նաւերը ինչպէս նաեւ թնդանօթակիւնները արդէն կրնան անցնիլ Վափորէն երբոր կանխաւ կը ծանուցուի Դրան . իսկ եթէ զրահաւորներու արուի այդ արտօնութիւնը, Ռուսիա եղաւ կան ու նախանձելի առանձնաշնորհում մը վաշելած պիտի ըլլայ :

— Հռոմէն հաղորդուած լուրի մը նայելով, իտալական կառավարութիւնը պիտի առաջարկէ եւրոպական դահլիճներուն որ կրէտական խնդրին կարգադրութիւնը լիակատար կերպով յանձնուի Կ. Պոլսոյ դեսպաններուն : Այս քանի՞երորդ անգամն ըլլալով . . . :

Միւս կողմէ, կը հաւաստեն թէ Դուռը՝ Պայրամէն ետք՝ իր առաջարկութիւնները պիտի ներկայայնէ կառավարչի մը ընտրութեան մասին :

— Նոր քանտիտա մըն ալ . . . : Տէյքի Նիդ կիմանայ Վիէնայէն թէ Դուռը Կրէտէի կառավարչութեան համար ընտրելի կը ներկայացնէ Մօրէլ պէյը, երբեմն քարտուղար հանգուցեալ Ռիւսթէմ փաշայի : Մօրէլ պէյ ազգով ֆրանսացի է :

— Երէկուան Սուրհանդակի լուրերուն նայելով՝ Թայմզ, Սթանսաւս և Տէյքի Թէյէկրաճ կիմանան Կ. Պոլսէ թէ դեսպանները իրենց առաջիկայ գումարման մէջ պիտի առաջարկեն որ Կրէտէի վարչութիւնը առժամապէս յանձնուի մեծ տէրութիւններէ երկուքին, իսկ կառավարչի ընտրութիւնը յետաձգուի մինչեւ որ կղզին կատարելապէս խաղաղ վիճակ մը ստանայ :

## ՔՐՕՆԻԿ

Շարաթ մը՝ կատակի և կտակի : Եւրոպացիները իրենց բարեկեցութեանը կը թողնէ այսօր ու վաղը մենք մեր աւանդութեանց կտակը պիտի բանանք Վարդանանցով : Անոնք խնդային, պարեցին և երգեցին, ներկային ամբողջ հրապարակի մէջ քիտի լսանք, պիտի ցաւինք և պիտի մոտանանք . անցեալին յիշատակով միայն Եւրոպացիները երկոտարեցնէն են մարդկութեան, մենք՝ աւանդ ուրաւ ըլլալով՝ ձերբեր :

Անոնք յայտով կողբուողին, մենք յիշատակով : Պատմութեան ըրած հոգեգտակներն ենք, չէ՞ : Նոյն լիակ այս բարեկեցութեան շարժումն մէջ ի դուր կը փնտռուի միտք մը, ծիծաղ մը, խնդութեան նշան մը հոյ շրթներու վրայ : Ոչինչ : Յիշութեան այս եօթնեկի պահուն հանրութեան զգայնեւ համար թէ բարեկեցութեան շարժումն է որ կուգայ, պատուաւ մը մեզի կուտան այն ալ . . . գերեզմանատան մը մէջ :

Սգաւոր ազգի մը բարեկեցական է այս :

\* \* \*

Գուցէ կտակի շարաթը աւելի փայլուն եղաւ քան թէ կատակինը :

Առաջնորդարանի չորս պատին մէջ կտակ կը տեղադրուի և այս երեւոյթը՝ մարգուս մարմաճ մը կուտայ . . . թաղական ըլլալով՝ կը խնդայ և չի հաւանում : Բայց ինչու քարոզարանի կը թաղի մեզի երբ այլանդակ ճշմարտութիւն մը մէջտեղ նետուի : Տեսէ՛ր, անգամ մը, ինչ իրարանցում կայ մեր պաշտօնական շրջանակներուն մէջ երբ, ակամայ բարեբար մը, կտակով մը վերի սարքերը կաշտուել ուղղուած լինելով, որուն մահէն աւելի խեղ կայ բան թէ կեանքէն, վերջին զգլուխի մը պահուն, քանի մը հազար օսկի կը թաղու եկեղեցարաններու տփին մէջ : Ահա տոմարներ իրարու վրայ կը գիտին, ժողովրդները ժողովներու կը յաճարեն և թղթակցութիւնները թղթակցութիւններու . կըրբը, աշխարհականը :

պաշտօնեան, անպաշտօնը իրար կանցնին, կերթան ու կուգան, քարիքաները պատնէս փայ կանաւին, թուղթ մը և մատիտ մը ամենուն ձեռքին մէջ մալ թէմաթիբական հաշիւներու մէջ կը թաղուին, հարկերն տարածը մատնեալ վրայ կը հասնեն և մտերմօրէն այցելութիւններ կուտան իրարու:

Անգին օրինաւոր ժառանգորդը ինքզինքը գետը կը նետէ: Ինչ զարհուրելի երեւոյթ:

Հարստութենէ վատիւ, տախից ֆանքեզի մըն է ըստ իս, զոր Պարսկաստան մը միայն կրնար տալ ինքզինքին:

Բայց եւ Մատուր մը Պարսկաստան մը աւելի խելացի կը գտնենք. սրովնետեալ խելք մարդը իրաւունք ունի մտածելու թէ չորս պատի մէջ խեղդուելէ աւելի զիւրին էր նեղութի մէջ խեղդուելը:

\* \* \*

Քանի որ կտակի վրայ կը խօսենք, պէտք է որ յիշենք Տիկին Եսայիի երեք միլիոնները:

Այդ գլխաւորն և ճշմարտագոյն բարի կինը 120 հազար տիկի գտնար մը թողած է անցեալ շարաթ Բարիկի... կենդանիներուն:

Բարիկեան քրօնկազմը մը հետեւեալ տղերք կը գրէ այս տարօրինակ կտակին առթիւ:

«Եստեք խնդրոյն այս կնիկն վրայ. վախճանի, կըսեն, չորքոտանիները մէջքնաւուն աւելի բաւ չէր ընէր այդ դրամը թողը մարդկային տառապանքներու մեղմացման ծառայեցնելու համար. այնքան տղաք կան առանց հայի և այնքան ծերեր առանց բնակարանի: Անորտ կին, կը գրէն, իր եղբայրներուն թշուառութիւնը ինչու չէ տեսած: Այո, այս գիտալով ինչները իրենց արդարանալի կողմերը ունին, բայց կրնանք ստիպել մէկը որ իր ուզած կերպով չընտրէ քրօնգործութեան եղանակ մը և եթէ չիտակը կազմէր, կը յաւելու, Տիկին Եսայիի շատ ազնիւ ըրած է իր հարստութիւնը անասուններուն կտակելով որոնք գոնէ չեն ստեր և տպւորստութեան նշաններ ցոյց չեն տար»:

Բարիկի ձերքը, կովերը, շուները, սագերը, էշերը, հաւերը և կատուները ինչ ուրախութեան մէջ են արդեօք:

Քիչ մը առաջ երեք չորս հազար տիկի համար թաղական ըլլալը կուգար կոր, կըսէի, հիմա միտքս կը փոխեմ և կըսեմ. երեք միլիոն... Բարիկի մէջ անասուն ըլլալը աւելի ազնիւ չէ՞:

Յ. Ա.

## ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

### ԶՕԼԱՒ ԴԱՏԸ

Զօրայի դատը քանի իր վախճանին կը մօտենայ, այնքան աւելի հետաքրքրական կը դառնայ ամբողջ աշխարհի համար: Գերմանիոյ եւ Անգլիոյ շրագիւղները մասնաւորապէս մեծ կարեւորութիւն կը նշանակեն անոր եւ իրենց մէջ Զօրայական ու հակազօրայական բաժանումներ ունին ճիշդ Ֆրանսայի քերթերուն պէս. ծերունի Պիգմալիոն միջերկրի իր դիտակին անկիւնէն կարծիքներ յայտնէր է քանի մը քրթակիցներու:

Եղեռնադատ ասեմի երկուշաբթի օրուն և իսպին մէջ ընդհանուր դատախազը արտասանէր է իր անբասանողական ռոտով կը պնդէ Տրեմիսի մեղապարտութեանը վրայ ու կը պահանջէ Զօրայի դատապարտութիւնը. յետոյ Զօրայ արտասանէր է ինքնապաշտպանութեան պերճախօս ձառ մը ուրուն մէջ եղբայր կը հաւատէր թէ ինք կը հաւատայ Տրեմիսի անմեղութեանը:

Կարգը Զօրայի փաստաբանին և հիմակ որ վերջին խօսքն ունի. Պ. Լապորի երեկ սկսեւ է իր պաշտպանողականը զոր պիտի շարունակէ այսօր ալ, ինչպէս կը հաղորդեն Բարիկեն եկած հեռագիրները: Երեկուն

և իսպին մէջ հրմշտակները քիչ մը սաստիկ եղած են ու փողոցի ցոյցերն ալ կը շարունակուին սակաւին: Հաւանաբար երդունայ դատարանները վաղը կամ միւս օր արտասանեն իրենց վճիռը: Ի միայս Տրեմիսի եւ ընդդէմ էսքերագի հրամանատարին խօսող վկաներուն մէջ նշանաւոր ձայն մը ունեցաւ ընկերայական երեսփոխան Պ. Ժօրէս որ խորհրդարանական ճշմարիտ ասեմաբանութիւն մը արտասանեց, զինուորական ասեմին հակառակութիւններ ու ապօրինաւորութիւնները մասնակից ընկելով. Բեյլիէս գօրովարդ պատասխանեց այս ձառին. երկրորդ Պ. Լուի Հալէ, անդամ Ֆրանսայի գիտութեան կաճառին, որ մասնագէտօրէն հաւատեց թէ Տրեմիսի դատապարտութեան հիմը կազմող հոյակաւոր պօրտրէս գրուած է էսքերագի գիրով:

Այս կրկնակ վկայութիւններ խոր ազդեցութիւն մը ըրած ըլլան կերելին երդունեաներուն մեջին վրայ:

## ԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱԶԳ. ԱՌԱՋԱՆՈՐԴԱՐԱՆԻ

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը հաղորդուի թէ վաղը, հինգշաբթի, 24 փետրուար, Սրբոյ Վարդանանց զօրավարաց ամալամբութեան և Մեծերոյի առթիւ, ըստ հնաւանդ սովորութեան եկեղեցական արարողութիւնը պիտի կատարուին Ս. Մինաս մատրան մէջ առաւօտեան ժամը 9ին, ուր ի հանգիստ համբրէն հայ ննջեցեաց հոգեհանգրձանեան պաշտօն և հանգիստը Ս. Պատարագ պիտի մատուցանէ Գեր. Առաջն. Տեղապահ Հայրն:

Գահիրէ, 11/23 փետրուար 98

Երէկ, Պայրամի շնորհաւորութեան առթիւ, Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ ընկերակցութեամբ Տ. Մամբրէ քահանայի և Առաջնորդարանի արարեքէնի քարտուղար Խարահիմ էֆէնտի նորաօր պաշտօնական այցելութեան գնաց Բարձր. Խորվի և Մայր Խորվիւհիին, ինչպէս նաեւ Ահմէտ Մալխար փաշայի, քաղաքիս կառավարիչ Մահմէտ փաշայի և խորհրդական Մուսթաֆա պէյ Ֆէհմի: Թէ՛ Ապրիլի պալատը և թէ արիւ ճանապարհը արժանաւայել ընդունելութիւն եղաւ Եգիպտահայոց հոգեւոր ներկայացուցչին:

Այս երկուշաբթի օր, Մարմինայի Ս. Մինաս մատրան մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ բարեխիշատակ Տիկին Տիգրան փաշայի մահուան տարեգարծին առթիւ: Այրարողութեանց կը նախագահէր Առաջն. Տեղապահ Հայրն: Հոգեհանգիստը զուտ ընտանեկան հանգամանք մը ունէր և ներկայ էին միայն Տիգրան փաշա իր աղջկան հետ և Պօղոս փաշա նուպար ու Տիկին Պօղոս փաշա: Եկեղեցական դասը, մատրան մէջ աշարողութեանց կատարումէն ետք, ողբացեալ տիկնայ դամբարանն երթալով օրհնեց զայն:

Պ. Մատուր Տէր Մարտիրոսեան որ նա-

խորդ շարժուն ինքզինքը ներս գետը նետելով անձնապաշտութիւն փորձած և ազատուած էր նաւավարներու ձեռամբ, թէ և մահուան վտանգէ վերժ է ու կը դարձնուի իր տան մէջ, բայց չգոյնի տկարութեան երթակայ է տակաւին և անկողնոյ կը ծառայէ:

Պ. Մատուր հոգեւորական է հանգուցեալ Եսայիի Հաննա Ասիսի որ, ինչպէս կը յիշուի, իր հարստութեան մէկ մասը կտակած էր Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցւոյն և հայ աղքատաց:

Տակաւին որոշ կերպով ի դիպացուի թէ ինչ էր արդեօք իր այս յուսահատական արարքին շարժառիթը. ըսողներ կան թէ իրեն կտակուած հարստութիւնը ձեռք անցընելու մէջ ձեւակերպութիւններու դժուարութեանց հանգիստ է որոնք վհատեցուցած են զինքը:

## ՏԵՂԱԿԱՆ

Երէկ, Պայրամի առթիւ, Բարձր. Խորվի պաշտօնական հանգիստը ընդունելութիւն կատարեց Ապրիլի պալատին մէջ: Առաւօտեան ժամ 8ին սկսեալ մինչեւ կէսօր, արարողապետութեան կողմէ նշանակուած կարգաւ շնորհաւորական այցելութեան դացին խորվական գերդաստանի իշխանները, նախաւորները և քաղաքային ու զինուորական բարձրասիւնեան պաշտօնեաներ, ամենքն ալ համագլխաւոր: Նոյնպէս զանազան հասարակութեանց հոգեւոր պետեր, գիւնադիտական մարմինը, տեղական և խառն դատարաններու անդամները, ինչպէս նաեւ Եգիպտոսի զլխաւոր քաղաքներէն ու գոտաներէն յատկապէս եկած կառավարիչներ, պաշտօնատարներ և այլ երեւելիք:

—Կը յիշուի թէ ասկէ վեց և օր միտա առաջ Բալատին անուն խոտուոյի մը ճարտար Մուհամմէտ Ալիի մէջ թրամուէյին տակ մնալով չարաչար կերպով մեռած էր:

Այրին դատ բանալով թրամուէյի ընկերութեան գէմ, խառն դատարանները այժմ իրենց վճիռը արձակած են:

Ընկերութիւնը դատապարտուած է վճարելու ալիին տարեկան ութ հարիւր ֆրանքի դումար, մը նոյնքան գումար մ'ալ իր ամեն մէկ զաւակներուն սրնք երեք հատ են:

Այրին այդ տարեկան գումարը պիտի ստանայ մինչեւ որ երկրորդ անգամ ամուսնանայ իսկ տղաքը մինչեւ 21 տարեկան ըլլալին:

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Պատիւ ունինք ծանուցանելու թէ Իգմիդի հէլէնական Ս. Կասարիէ եկեղեցւոյ վիճակահանութեան Ա. Էլասի թիրաքը տակոյ 20ին տեղի ունեցած է և մեծագոյն պարգևները շահող թիւերը հետեւեալները եղած են որոնք մասնաւորապէս մեզի հարգուած են հետագրով:

|        |      |         |       |     |
|--------|------|---------|-------|-----|
| Ա. թիւ | 3149 | կը բաճի | 25000 | դր. |
| Բ. »   | 2058 | »       | 5000  | »   |
| Գ. »   | 2452 | »       | 3000  | »   |

Հետեւաբար կը խնդրուի մեր յաճախորդներէն ու ներկայանան մեր գրասենեակը իրենց վիճակած պարգևները ստանալու համար:

Կ. Վ. ԵԿԱԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Գահիրէ, 22 փետրուար 1898

Պապար Մուսայր ՄԱՆՕԹ.— Մնացեալ թիւերուն ցանկը պիտի հասնի երկուշաբթի:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Հ Ա Ր Ո Ս Ն Յ Ո Ւ Ն Ե Ր

Երկու տարի առաջ մեծահարուստ վաճառական մը կը մեռնէր Օտէսայի մէջ, իր ամբողջ հարստութիւնը՝ չորս միլիոն ռուբլի, կտակելով իր քրոջ աղջիկներուն, պայմանով որ այս օրիորդները ամուսնանալէ առաջ՝ տասներեք ամիս չարոնակ ուրիշներու քով ծառայէին իբրեւ աղային վաճառքի իբրեւ լուսարար: Այս պայմանները յարգել ապու համար երեք կտակարարներ կարգած էր իր բարեկամներէն:

Աղջիկներէն երկուքը իբրեւ սպասուհի մտած էին տան մը մէջ և երրորդը լուսարարութեան պաշտօն մը գտած էր քաղաքին լուսարար պանդոկներէն մէկուն մէջ:

Օտէսայի լրագիրները այս տարօրինակ կտակին մանրամասնութիւնները պատմած ըլլալով, շատ մը երիտասարդներ ներկայացած են այդ հարուստ աղջիկներուն ձեռքը խնդրելու համար: Տասներեք ամսուան մէջ այդ աղջիկներուն մեծը չորս հարիւր յիսունէ աւելի խնդրարկուններ ունեցած է և միւս երկուքը երեք հարիւրական:

Բայց դժբաղդարար այդ երիտասարդներուն համար, օրիորդները իրենց պայմանաւոր լրանալուն պէս, ամեն առաջարկութիւն մերժած են և յայտարարած են թէ կարգուելու դիտարկութիւն չունին:

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԼԱՓԱ

Այս լուրը Ամերիկայէն կուգայ մեզի, բնականաբար:

Էտիսըն ընտ Սուան ընկերութիւնը երեք տրականութիւնը գործածել փորձած են բուժելու համար յօդացուները, չլային հիւսնեղութիւնները, աքլորախեղդը (croup), թոքառատալը, քիթը և արեան շրջանի խանգարումները:

Միջոցը շատ պարզ է. քանի որ այս հիւանդութիւնները պաղ առնելէ առաջ կուգան, հետեւաբար ելեքտրականութիւնը կրնար գործածուիլ այդ պաղը մարմնէն դուրս քաշելու համար: Էլեքթրօթէրմ, այս է նոր գիւտին աշունքը, կը կայանայ բարձրիկ մը մէջ որուն երկու ծայրերուն կցուած են ելեքտրական հոսանքի հետ հաղորդակցութիւն ունեցող թելեր:

Անգամ մը որ այդ բարձրիկը զետեղուած է մարմնին ցաւած մասին վրայ, կոճակի մը վրայ հարուած մը և ահա հոսանքը կսկսի, ելեքտրականութիւնը իր գործը կը տեսնէ, պաղը կանհասանայ և հիւանդը կը բժշկուի:

Կարելի է այս լուրը սուտ ըլլայ, բայց ապահովապէս շատ զուարճալի չէ՞ք գտնել:

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

ՅՈՂՀԱՆՆԵՍ ԴԱՔԱՐԵԱՆ

ԳԱՀԻՐԷ. ԷԳՎԻԼԻԷ ԻՊՈՂՈՅ ԷԼՏՐԱՏՅՈՅ ԴԻՄ

Ճաշակատար պատրաստութիւն արանց և կահուն Էօշիկին:

Ապրանքի ընտրութիւն, տոկոսութիւն և գուհոյս յիշ սրբականներ:

Գներու չափաւորութիւն: 1—4

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուստի Հալանեան պաշիւ ունի ծանուցանել իր բազմաթիւ յանապտոգներուն քի իր կօշկալարի բանուրը Պազար Մուրուրէն փոխադրած է Բաքի Էթիքսիէնի դիմացի կարգը՝ կազմ ընկերութեան կեդրոնին մօտ բաւաժին մէջ, գեղնայարկ, բիւ 6:

Ձեւաւոր ու ընկիւ կօշիկներու պատշաճութիւն արանց եւ կանանց համար, դիւրամասշտիկ գներով:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻՍԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գներով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և Ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ հանգստի ջուրեր, անուշահոտ քիւնք եւն. Բնալուծական և մանրադիտական քննութիւնք: Դեղարանս կը յաճախեն հոյ և օտարազգի ծանօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք տգրասաց համար: 28—50

ՅՈՐԺԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գներով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ: 10—10

Ա. ԼԷԹՈՒԱՆ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառատունէն Տեարք Յովակիմեան Եղորարք այսօր առ հաստատուած են ի Գահիրէ և Մուսիի փողոցը՝ Լաթիֆի գոհարավաճառատան գլխաց լայնած են վաճառատուն մը սեր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆանելա, գուլպայ և դանաղան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճոխ դանաղանութիւն մարօքներէի, հոսեղեցներու և արդուզարդի վերարերեալ ամեն տեսակ սարքուայ: Շեֆիլի հաշակաւոր պողպատեայ գործիներ, ամեղի, մկրաս, զմեղի եւն:

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ՈՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐԻ: Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ձեռք և փութով կը կատարուին: 24—24

ԼՈՒՍԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԿԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒՍՅ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿԱՐԴԿԷ արանց և կանանց շապիկներ, շրջագլխաններ, ելն. մաքրութիւն, ճշգրտահաշութիւն, և խիստ չափաւոր գին: 23—24

Le Gérant: D<sup>r</sup>. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՅ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱԳԵՍՏԻՆԳՐՈՅ ԳԻԾ

| Կ Ա Յ Ո Ր Ո Ն Ք | Ժամանակ | Ժամանակ     |             | Ժամանակ     |             | Ժամանակ  |             | Ժամանակ  |             |
|-----------------|---------|-------------|-------------|-------------|-------------|----------|-------------|----------|-------------|
|                 |         | 1, 2, 3 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2 կգ. | 1, 2, 3 կգ. |
| Գահիրէ          | մեկ.    | 4 45        | —           | 7 30        | 8 15        | 9 30     | 3 30        | 4 45     | 7 15        |
| Պէնհա           | »       | 8 —         | —           | 7 49        | 9 32        | 10 15    | 4 47        | 5 29     | 8 32        |
| Թանթա           | »       | 11 28       | —           | 8 30        | 10 30       | 10 55    | 5 45        | 6 7      | 9 30        |
| Տամանհուր       | »       | 11 48       | 6 —         | 8 34        | 11 15       | 11 —     | 6 26        | 6 11     | —           |
| Ս. Ղ. Բոսանդրիա | »       | 3 10        | 7 34        | 9 41        | 12 49       | 11 58    | 7 59        | 7 7      | —           |
| Ա. Ղ. Բոսանդրիա | »       | 6 25        | 9 45        | 10 45       | 2 30        | 1 —      | 9 40        | 8 7      | —           |

ԱԳԵՍՏԻՆԳՐՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

| Կ Ա Յ Ո Ր Ո Ն Ք | Ժամանակ | Ժամանակ     |             | Ժամանակ     |          | Ժամանակ  |          | Ժամանակ  |          |
|-----------------|---------|-------------|-------------|-------------|----------|----------|----------|----------|----------|
|                 |         | 1, 2, 3 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2, 3 կգ. | 1, 2 կգ. | 1, 2 կգ. | 1, 2 կգ. | 1, 2 կգ. | 1, 2 կգ. |
| Ա. Ղ. Բոսանդրիա | մեկ.    | —           | 7 —         | 7 15        | 9 —      | 9 20     | երեկ.    | երեկ.    | երեկ.    |
| Տամանհուր       | »       | —           | 8 6         | 8 58        | 10 2     | 12 14    | 4 13     | 5 15     | 8 6      |
| Թանթա           | »       | —           | 9 12        | 10 28       | 11 —     | 2 39     | 5 43     | 6 10     | 9 40     |
| Պէնհա           | »       | 6 15        | 9 16        | 11 20       | 11 5     | 2 49     | 6 30     | 6 14     | —        |
| Գահիրէ          | »       | 7 18        | 9 59        | 12 23       | 11 46    | 4 43     | 7 33     | 6 52     | —        |
| Ս. Ղ. Բոսանդրիա | »       | 8 30        | 10 45       | 1 35        | 12 30    | 6 25     | 8 45     | 7 35     | —        |

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

| ԿԱՅՈՐԱՆՔ      |      | ԱՌԱՐՈՏ |   | ԵՐԵԿՈՅ |   | ԿԱՅՈՐԱՆՔ      |      | ԱՌԱՐՈՏ |       | ԵՐԵԿՈՅ |   |
|---------------|------|--------|---|--------|---|---------------|------|--------|-------|--------|---|
| Գահիրէ        | մեկ. | 11 40  | — | 7 —    | — | Սիւէզ (բարափ) | մեկ. | 9 50   | —     | —      | — |
| Պէնհա         | »    | 12 28  | — | 7 48   | — | » կայարան     | »    | —      | —     | 3 30   | — |
| Զակարիկ       | »    | 12 33  | — | 7 53   | — | Խամաիլիա      | »    | երեկ.  | երեկ. | 7 5    | — |
| Զակարիկ       | »    | 1 34   | — | 8 54   | — | Զակարիկ       | »    | 3 7    | —     | 8 53   | — |
| Խամաիլիա      | »    | 1 44   | — | 9 4    | — | »             | »    | 3 17   | —     | 9 3    | — |
| Սիւէզ կայարան | »    | 3 40   | — | 1 —    | — | Պէնհա         | »    | 4 13   | —     | 9 47   | — |
| Տաք (բարափ)   | »    | —      | — | 5 —    | — | »             | »    | 4 17   | —     | 9 4    | — |
| Տաք (բարափ)   | »    | 6 55   | — | —      | — | Գահիրէ        | »    | 5 5    | —     | 10 35  | — |